ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ՝ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ

ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ, որը գտնվում է ՀՀ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 հասցեում, ներկայացնում է ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԱՇՁԲ-13/17 ծածկագրով բանակցային ընթացակարգի՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու արդյունքում 2013թ-ի հուլիսի 31-ին կնքված պայմանագրում 2014թ-ի դեկտեմբերի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ:	Շինաշխատանքների պետական գնման պայմանագրի ժամկետի երկարաձգման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Արագածոտնի մարզի Վարդենիս համայնքի նորակառույց դպրոցի նախագծանախահաշվային փաստաթղթերի լրացուցիչ մշակմամբ (ուսումնական մասնաշենքի մասնակի, մարզադահլիճի մասնաշենքի ամբողջական վերանախագծում և կոնստրակտիվ լուծումների որոշակի փոփոխություն): Վերանայվել է նաև մասնաշենքերի տեղադիրքերը, ինչպես նաև ճարտարապետահատակագծային լուծումները:
Փոփոխության նկարագրություն:	2014 թվականի դեկտեմբերի 20-ին կնքվել է թիվ 3 համաձայնագիրը՝ պայմանագրի ժամկետի երկարաձգման և կանխավճարի փոխանցման մասին:
Փոփոխության հիմնավորում:	ՀՀ կառավարության 18.12.2014թ. N 1451-Ա որոշումը:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ